

յերկիրն Ատրպայականի, եւ Մերուժանն առաջնորդ գնդին բանակի նորա, եւ բուն բանակն ուրեմն թագաւորին ի Թաւրեշն բնակեալ էին:

4 Եւ հասաներ սպարապետն զաւրավարն Յայոց Մուշեղ, անկաներ ի վերայ բանակին քառասուն հազարաւ, եւ անդէն ձեռն ի գործ արարեալ կոտորեր¹: 5 Ապա միաձի մագապուր թագաւորն Պարսից Շապուհ ճողոպրեալ փախչէր. եւ զամենայն կարեւան բանակին առ հասարակ ընդ սուր հաներ Մուշեղ հանդերձ զաւրաւքն Յայոց: 6 Չի զբազումս կոտորէին, եւ զբազումս յաւազանոյն² Պարսից ձերբակալս առնէին, եւ առնուին զգանձս թագաւորին Պարսից յաւարի. եւ ըմբռնէին զտիկնանց տիկինն հանդերձ այլովք կանամբքն: 7 Եւ զամենայն մաշկաւարզան ի բուն արկաներ Մուշեղ սպարապետն, եւ զամենայն աւազանին՝ արս իբրեւ վեց հարիւր՝ հրամայէր մորթել զաւրավարն Յայոց Մուշեղ, եւ լնուլ խոտով. եւ տայր բերել առ Պապ արքայն Յայոց: 8 Առնէր զայս ի վրեժս հաւրն իւրոյ Վասակայ:

9 Բայց զկանայսն Շապիոյ թագաւորին Պարսից ոչ ումեք ինչ թոյլ տայր Մուշեղ զաւրավարն Յայոց անարգել ինչ զնոսա ումեք. այլ ժանաւարս տայր նոցա կազմել ամենեցուն, եւ հանեալ արծակեր զամենեսեան զհետ առն նոցա Շապիոյ արքայի: 10 Եւ ի Պարսկացն ընդ նոսա արծակեր, զի երթօցեն առ Շապուհ թագաւորն Պարսից ողջս եւ անարատս: 11 Իսկ թագաւորն Պարսից զարմացեալ ընդ բարերարութիւնն Մուշեղի եւ ընդ քաջութիւնն եւ ընդ ազատութիւնն, զի ոչ արար ինչ նմա յաղագս կանանցն թշնամանս: 12 Եւ էր ի ժամանակին յայնմիկ երիվարն Մուշեղի, ճերմակ ձի մի. իսկ թագաւորն Պարսից Շապուհ յորժամ առնոյր զինի ի մատունսն ըմպել, յորժամ ուրախութեանն իւրոյ խրախութիւնս առնէր զաւրացն իւրոց, ասէր. ճերմակածին զինի արբցէ: 13 Եւ ետ նկարել զտաշտ ի պատկեր զՄուշեղ ճերմական. եւ ի ժամ ուրախութեանն իւրոյ դնէր զտաշտն առաջի իւր, եւ յիշէր հաւնապագ զնոյն բանս ասելով՝ թէ ճերմակածին զինի արբցէ:

14 Այլ Մուշեղ եւ ամենայն զաւրքն Յայոց անչափ առին զաւար ի բանակէն Պարսից, եւ անչափ լցան զանձաւք եւ ստացուածովք. եւ բազում աւարամասն Պապայ պահէին թագաւորին իւրեանց. եւ զաւրացն Յայոց՝ որ անդէն առ թագաւորին Պապայ էին մնացեալ՝ հանին աւարամասն, եւ զաւրավարացն Յունաց՝ որ էին առ թագաւորին Յայոց. սոյնպէս եւ ամենայն զաւրացն տային բաշխիչ ի մեծամեծ աւարացն ածելոցն: 15 Այլ իբրեւ դարձան զաւրքն Յայոց յաշխարհն իւրեանց, բազումք ի զաւրացն Յայոց ամբաստանէին առ թագաւորին Պապայ զՄուշեղէ զսպարապետէն, թէ ընդէ՛ր արծակեաց զկանայս թագաւորին Պարսից զթշնամանոյն մերոյ: 16 Եւ թագաւորին

1 *Օրինակ մի յաւելու՝ առհասարակ*

2 *Յօրինակի միում՝ աւազագոյնս*